նայեցի իմ շուրջը: Ճրագի ձէթը արդէն սպառոել էր, եւ պատրոյգը երբեմն աղօտ կերպով պլպլում էր, երբեմն հանգչում էր: Բայց սրահի մէջ բաւական լոյս կար. կիսալուսինը դեռ ոչ բոլորովին անհետացել էր հորիզոնից: Նայեցի Ասլանի եւ վարպետ Փանոսի անկողինների վրայ, նրանք դատարկ էին: Երեւում էր, որ դեռ չէին վերադարձել: Նայեցի դէպի հիւսնի արհեստանոցը, այնտեղ դեռ ճրագի լոյս էր երեւում:

Օտարոտի ձայնը, որ զարթեցրեց ինձ, որքան յիշում եմ, դռան սաստիկ բախման ձայնի էր նմանում. նայեցի դէպի սրահի մէջ բաւող դուռը. նա բոլորովին բաց էր. իսկ երեկոյեան, մեր քնելու ժամանակ, ես նրան փակած էի տեսել: Գլուխս դարձեալ դրեցի բարձի վրայ, բայց քնել չկարողացայ: Քանի րոպէից յետոյ մի մեղմ սօսափիւն, որ հագուստի խշխշոցի էր նմանում, գրաւեց իմ ուշադրութիւնը: Գլուխս կրկին վեր բարձրացրի եւ ստոերի մէջ նկատեցի մի ինչ-որ անորոշ կերպարանք: Նա սկզբում անշարժ էր, յետոյ շարժոեցաւ եւ հանդարտ կերպով անցաւ, առանց ամենաթեթեւ ձայն անգամ հանելու: Կարծես նա օդի միջով էր գնում, եւ նրա ոտները գետնին չէին դիպչում: Նա ցած իջաւ սրահի սանդուղքներից, դիմեց դէպի բակը: Այնտեղ, լուսնի լուսաւորութեան առջեւ նա աւելի որոշ կերպարանքով նկարոեցաւ իմ առջեւ. կարմիր շիլայի շապիկը իջնում էր մինչեւ նրա մերկ ոտները. գլխի հիւսերը արձակ էին, նրանք կիսով չափ ծածանւում էին ճակատի վրայ, իսկ մնացեալ մասը խիտ գանգուրներով ծածկել էր նրա մէջքը: Երբ նա կանգ առեց բակի մէջ, ետ նայելով դէպի սրահը, ես տեսայ նրա դէմքը. դա կնոջ գունաթափ դէմք էր, որը լուսնի բաց-կապտագոյն լուսաւորութեան առջեւ աւելի թախծալի արտայայտութիւն էր ստացել: Նա կրկին շարժոեցաւ եւ սկսեց դիմել դէպի պարտէզը:

Չգիտեմ սնահաւատութիւնից, թէ մի այլ զգացմունքից, իմ ամբողջ մարմնով անցաւ մի սոսկալի սարսուռ: Ինձ այնպէս էր թւում, թէ մեռելներից մէկը գերեզմանից յարութիւն էր առել եւ շրջում էր գիշերային լռութեան մէջ: Քունը բոլորովին փախաւ իմ աչքերից: Երբեմն վերմակը քաշում էի գլխիս, աչքերս խփում էի, վախենալով, մի գուցէ կրկին տեսնեմ նրան, իսկ երբեմն աչքերս երկիւղածութեամբ բաց էի անում, նայում էի: Նա դարձեալ երեւում էր: Սկսեց աղօթք կարդալ. աղօթքը փոքր-ինչ հանգստացրեց ինձ:

Նա, առանց որեւիցէ շշուկ հանելու, հանդարտ քայլերով անցաւ բակի միջով, մօտեցաւ պարտէզի դռանը: Ձեռքը տարաւ դէպի փականքը եւ իսկոյն հեռացաւ, երբ նկատեց, որ դուռը փակ էր: Յետոյ բակի պատի մօտով սկսեց կամաց-կամաց դիմել դէպի փողոցի դուռը եւ, մի քանի րոպէ չանցած, բոլորովին անհետացաւ: Ու՞ր գնաց, ես չտեսայ, որովհետեւ երկիւղը այն աս-